ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

6 սեպտեմբերի 2012 թվականի N 35-Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով

Կ ա ր գ ա դ ր ում եմ

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 9-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի N 1919-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մարտի 29-ի N 411-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մայիսի 24-ի N 711-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 7-ի N 781-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> N 1083-Ն որոշման N 15 հավելվածով հաստատված բնակիչներին անհատույց պետական ֆինանսական աջակցության տրամադրմանը վերաբերվող հարցերի քննարկման նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Ֆ.Ափինյան -- մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ, հանձնաժողովի նախագահ

Վ . Սարգսյան -- մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ

Մ. Մխիթարյան--մարզպետարանի աշխատակազմի ՏԻՄ և ՀԳՄ հարցերով վարչության պետ

Ա. Խաչատրյան--մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության բաժնի վարիչ

Մ.Մելքումյան --մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ

2. Անհրաժեշտության դեպքում հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել համապատասխան համայնքի ղեկավարին, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի համապատասխան տարածքային ստորաբաժանման ներկայացուցիչներին /համաձայնությամբ/:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

2012թ. սեպտեմբերի 6
ք. Իջևան